ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» հոկտեմբերի 2021թ. N ----- Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՌՈԲԵՐՏ ՎԱՂԱՐՇԱԿԻ ԷԼԻԲԵԿՅԱՆԻՆ
«ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 35-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1.Երևան քաղաքի 2803-րդ տարեդարձի և ծննդյան 80-ամյակի առթիվ, հայկական կերպարվեստի զարգացման գործում ներդրած նշանակալի ավանդի, արվեստի բնագավառում ունեցած հաջողությունների և ստեղծագործական նվաճումների համար գեղանկարիչ, ՀՀ ժողովրդական նկարիչ Ռոբերտ Վաղարշակի Էլիբեկյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՌՈԲԵՐՏ ՎԱՂԱՐՇԱԿԻ ԷԼԻԲԵԿՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ռոբերտ Վաղարշակի Էլիբեկյանը ծնվել է 1941թ. ապրիլի 21-ին, Թբիլիսիում: 1960թ. տեղափոխվել է Երևան:

1960-1965թթ. սովորել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում:

1966թ. Հայաստանի ճարտարապետների տանը բացվել է «Ռոբերտ Էլիբեկյան և Սեյրան Խաթլամաջյան» առաջին անհատական ցուցահանդեսը:

1970թ.-ից Հայաստանի նկարիչների միության անդամ է: 1973թ. Հայաստանի նկարիչների 10-րդ համագումարում ընտրվել է Հայաստանի նկարիչների միության վարչության անդամ:

2014 թվականին լույս է տեսել Ռոբերտ Էլիբեկյանի գիրք-ալբոմը, որը ներկայացնում է նկարչի ստեղծագործական կենսագրությունը:

1977թ. արժանացել է ՀԽՍՀ վաստակավոր նկարչի, 2008թ.՝ ՀՀ ժողովրդական նկարչի կոչումներին, Սուրբ Մեսրոպ Մաշտոցի և Պատվո շքանշանակիր է:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով գեղանկարիչ, ՀՀ ժողովրդական նկարիչ Ռոբերտ Էլիբեկյանի նշանակալի ավանդը հայ կերպարվեստի զարգացման գործում, ինչպես նաև արվեստի բնագավառում ունեցած հաջողությունները և ստեղծագործական նվաճումները՝ առաջարկվում է Ռոբերտ Վաղարշակի Էլիբեկյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում և Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՌՈԲԵՐՏ ՎԱՂԱՐՇԱԿԻ ԷԼԻԲԵԿՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ռոբերտ Վաղարշակի Էլիբեկյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՌՈԲԵՐՏ ՎԱՂԱՐՇԱԿԻ ԷԼԻԲԵԿՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ռոբերտ Վաղարշակի Էլիբեկյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**